ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ



ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԳՈՒՅՆԵՐԻ ԵՐԳԻՉԸ*

Ս. Ն. ՄԵՐԳԵԼՅԱՆ

ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀՍՍՀ ԳԱ փոխ-պրեզիդենտ

Հայաստանի գիտությունների ակադեմիան ամբողջ ժողովրդի հետ այսօր հրաժեշտ է տալիս իր ամենահոչակավոր և կարկառուն անդամներից մեկին՝ ակադեմիկոս Մարտիրոս Սերգեյի Սարյանին:

Մարտիրոս Սարյանը, որը մարմնավորել էր բովանդակ ազգի արվեստի փառքը, հարազատ ժողովրդի մեծ զավակն էր, որն իր ստեղծագործությամբ արտացոլեց նրա պատմության ու հոգևոր կյանքի մի ամբողջ դարաշրջան:

Յոթ տասնամյակ շարունակ Սարյանը գեղեցկություն էր կերտում, իր ստեղծագործության ընդերքում ազգային արվեստի վաղեմի ավանդույթները միահյուսելով գեղարվեստական նորագույն ձևերի հետ, իմաստունի մեծ ոգին՝ մանկության կենսաթրթիռ և անխառն տպավորությունների հետ:

Լինելով գեղանկարչության անզուգական վարպետ, կախարդական գույների երգիչ, նա արտահայտում էր իր ժողովրդի հոգու գեղեցկությունը: Կատարելապես տիրապետելով լույսի և գույնի սինթեզի օրենքներին, նա իր կտավներում արտահայտում էր երևակայության և դատողության, բնության և մարդու ներդաշնակ միասնությունը:

Սարյանական այդ առանձնահատուկ ոգին դարձավ մեր ժամանակի արվեստի բացառիկ մի երևույթ, նա ընդլայնեց իրականության գեղարվեստական ճանաչման սահմանները, կյանքի կոչեց այնպիսի հոյակապ կտավներ, որոնք զարմացնում են ոչ միայն իսկական բարձր վարպետությամբ, այլև նրանցում պատկերված աշխարհի ինքնատիպությամբ, այն աշխարհի, որը ժամանակակիցների գիտակցության մեջ է մտել որպես առանձնահատուկ, սարյանական աշխարհ:

Սարյանական սինթեզի մեջ մենք տեսնում ենք տիեզերքի ճանաչման մարդկության ձգտման գեղարվեստական արտացոլումն ու յուրահատուկ մարմնավորումը: Նրա հիասքանչ և գունագեղ արվեստը իրականության հետ հաղորդվում է իր առանձնահատուկ ուղիներով, նա համահնչուն է մեր տիեզերական դարի մասշտաբներին ու երևակայությանը, գիտական ու գեղարվեստական աշխարհընկալման ժամանակակից մակարդակին:

Մարտիրոս Սարյանը, ինչպես բոլոր ճշմարիտ արվեստագետները, մտածող արվեստագետ էր, փիլիսոփա արվեստագետ, որի հայացքները մարմնավորվել են նրա կտավներում, ստացել գեղարվեստական հյուսվածք: Սարյանի գործերում կոնկրետ իրական աշխարհը ընկալվում է իր ամբողջ խորությամբ, ներկայանում սարյանական վճիտ գույներով պատկերված իր անկրկնելի իրողության մեջ և բնության երևույթների ետևում թաքնված ընդհանրության ու ներդաշնակության մեջ: Ոչ միայն նյութական կոնկրետությունը, այլև ամբողջ ի մի շաղկապող

---

* *Կարդացվել է 1972 թ. մայիսի 11-ին, Մարտիրոս Սարյանի թաղման ժամանակ։*

հարաբերակցությունները, նկարչի համար հանդիսանում են գլխավորը. Սարյանին ներկայանում որպես խորհրդանիշ, ինչպես նա ինքն էր ասում՝ «տիեզերքի ներքին շնչառության, նրա ազատ ու մտածված դրսևորման արտահայտություն»: Սարյանի արվեստի հենց այս առանձնահատկությունը՝ բնության ընդհանուր ներդաշնակությունը, բացահայտելու և իմաստավորելու առանձնահատկությունը նրան կանգնեցրեց մեր դարաշրջանի մեծ արվեստագետների շարքը, որոնց խոհերն ու զգացումները հասկանալի ու համահնչուն են բոլոր ազգությունների մարդկանց համար:

Իր արմատներով հասնելով հայ գեղարվեստական մշակույթի ավանդույթներին. Սարյանի արվեստը պահպանել է ազգային լավագույն գծերը: Սարյանն իր գեղարվեստական հանճարով իմաստավորեց համաշխարհային արվեստի բարդ ու հակասական երևույթները, ազգայինն ու համաշխարհայինը անցկացրեց հայ արվեստագետի պրիզմայի միջով, այն մարդու, որն իր հարազատ ժողովրդի հետ վերապրեց թե նրա ողբերգական աղետները, թե նրա վերածնունդն ու ծաղկումը սոցիալիստական իրականության պայմաններում, սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում: